դարձնելու, ինչպէս կը վկայէ Յովհաննէս Անկիւրացի։ «Ուռհայեցի Սրապիոն կաթողիկոս բազում փափաք ունէր վասն տպագրութեան արհեստիս եւ ոչ եղեւ հասու։ Եւ ես պատուիր աշակերտին իւրոյ տէր Գրիգոր քաջ տաղանդասէրին Կեսարիոյ, ղիւի թէ դու կարողանաս տպագրութեան արհեստիս, եւ նա եւս ոչ կարողացաւ»։

Որոշ էր թէ միջավայրը և պայմանները ձեռնտու չէին և Կեսարացի հանդարտ պաշտօնավարութիւն մը չէր ունեցած և շարունակ շարժման ու տեղափոխութիւններու և մշտատև պայքարի մէջ գտնուած էր, և չէր կրցած կատարել իր փափաքը։

Այս պատճառով Յովհաննէս Անկիւրացիի «իբր հարկս ի վերայ եղեալ պատուիրեր ... հանապազ թէ ղիւի դու կարողանաս, վասնզի իմ (Յովհաննէսի) ծանօթութիւն կայր ընդ ազգիս փոանիկաց եթէ կարդացող եւ եթէ ղեզուաւ» (Յ[illegible] Ոդէ, Ա. տպ. 1643. Վենետիկ, յիշատակարան. կամ Նոր-Մատենագիրքոյն, Բ. հտ. էջ 224. կամ Հայ Մատենագիրքոյն, 1883, էջ 457)(*)։

(*) Յովհաննէս թիւ. Անկիւրացի արդարեւ անոր մահէն տարի մը յետոյ՝ 1637ին՝ «վասն պասմա առնելոյ զՍուրբ Աստուածաշունչն» կը դիմէ Եւրոպա, Հռոմ եւ «անդ դ. ամ բազում աշխատութեամբ եւ բազում չարչարանաւք, զոր չէ հնար